

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐՈՒՍԳԾԵՐ

19-րդ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին երեսնամեակ

ՅՈՒՀԱՆ ՄԻՐԶԱՅԵԱՆ ՎԱՆԱՆԳԵՑԻՆ (1772—1840) ծնւում է Վան քաղաքում: Չորս տարեկան հասակում որք է մնում հորից, ազգատ մայրը շատ նեղութիւն է կրում իւր բաղմանդամ ընտանիքը պահելու համար և իւր ութ տարեկան որդուն քալիս է Կառս անապատը իբրև փոքրաւոր մի օմն Գառպար վարդապետի: Այստեղ նա ցոյց է աւելիս առանձին ուէր ուսման և կարգադր երեւի հենց իւր վարդապետից է սովորում, իսկ գրելը վանքի կանգակազրից: Մեարանները տեսնելով նրա ընդունակութիւններն՝ առանձին խնամք են աւանում իւրան, շուտով դպրութեան չորս աստիճան է ստանում՝ Ամբղագ է անունը փոխելով Յովհանի: Ուսման փափագը նրան Կ. Պոլիս է տանում իր քսանամեայ հասակում, երբ լու ծանօթ էր Աստուածաշնչին, գիտէր շարական ու նարեկ, ի հարկէ մեծ մասամբ անգիր սերտած, ինչպէս սովորական էր ժամանակի համար: Այս միջոցին նա անգիր անել է սկսում և «բառաբանը»:

Մայրաքաղաքում նրան յաջողում է մանել «մայր գրաբատներ», ուր ստանում է իւր ժամանակի իսկական մեծ ուսումը, սովորում է քերականութիւն, ճարաստանութիւն և տրամաբանութիւն այստա գերիմաստ ուսուցչացն տիրացութեան և մահաեօի Մանասէի Կարնեցւոյ: Ակզբում ազրում է մեծ նեղութեամբ, իւր հացը հայթայթում է ուրիշների համար նամակներ գրելով բաց դպրատան վերահոյու ընորհք Մկրտիչ Մերիճանեան ամիրան, տեսնելով նրա ընդունակութիւնն ու յառաջագիմութիւնը, շաքաթական երեք դահեկան թոշակ է նշանակում նրան, որպէս զի աւելի մեծ եւսանդով կարողանայ պարսպել և յետոյ նոյն իսկ իւր աւուն է ընդունում նրան տպրելու, սեղանակից անելով իրան:

Վանանդեցին այս հասակում արգէն ցոյց է աւելիս բանահիւսութեան շնորհք և յօրինում է ճառեր կրօնական բովան-

դահույթեամբ, որոնցով զուարճանում էր Շնորհք ամիրան իւր ազատ ժամերին: Այդ ճառերից մէկը գրում է նա իւր մայր դպրատան, իւր հովանաւոր ամիրայի և իւր երկու վարժապետների վրայ, համենալով երախտահատոյց լինել նրանց: Մի անգամ ամիրան խնջոյք է տալիս Զաքարիա պատրիարքին. և ըստմականները խնդրում են Յովհաննին, որ իրենց խնջոյքի առթիւ մի ոտանաւոր յօրինէ: Նա ճաշի միջոցին գրում է ուղած ոտանաւորը ու կարգում. ամենքը հաւանում են և խնդրում Պատրիարքին, որ մի «վերտառութեամբ», այսինքն մականուն գնելով, պատուէ Յովհաննին: Ամիրայի ցանկութեամբ՝ պատրիարքը «Վանեցի» կոչումը, որ երեւի գիւր չէր գալիս ամիրային, փոխում դարձնում է «Վանանդեցի» ի յիշատակ Ղուկաս Վանանդեցու:

Վեց տարի սովորելուց յետոյ՝ Յովհան Վանանդեցին Շնորհք ամիրայից վարժապետ է ուղարկւում Զմիւռնիա, ուր և ուղեւորւում է 1798 թ. ապրիլին: Այստեղ ամուսն սնում է նա, և տասնութ տարի վարժապետութիւն անելուց յետոյ ձեռնադրւում է քահանայ և մի առանձին դրբով, «Վերսիս» քահանայից», բացատրւում է քահանաների պարտականութիւնները: Վեանքի վերջերսւմ տաս տարի յոգացաւ ութեամբ տանջուելով մեռնում է 1840 թ. փետր. 3-ին և ամենքից յարգուած՝ պատուով թաղւում է:

Յովհան Վանանդեցին ունեցել է միայն հայ ուսում. չի իմացել ոչ մի եւրոպական լեզու, տեղեակ է եղել բայի տաճկերէնից նաև պարսկերէնի և արաբերէնի. և ինչպէս երևում է պարապել է Պարսից գրականութեամբ, որովհետև կենսագիրն¹⁾ ասում է թէ պարսկերէնից թարգմանել է ոտանաւորով «Փիէնտի աղգար» կոչուած բարոյական բանաստեղծութիւնը: Հին կլասիկներ չի կարդացել, բայց նրանց մասին, ինչպէս և զիցարանութեան մասին. տեղեկութիւն ունի և մէկ մէկ գործ է ածում զից անուններ: Քաջ ծանօթ է եղել հայ մատենագրութեանը, որից և ստացել է իւր ամբողջ զարգացումը: Սիրող լինելով գրականութեան, նա աշակերտական հասակից արդէն գրել է ոտանաւորներ. բայց բանաստեղծութեամբ պարապել է իսկապէս Զմիւռնիայում և յօրինել է շատ բան: Նա գործել է սակայն և իբրև վարժապետ ու պատրաստել է շատ աշակերտներ, որոնցից յետագայում նշանաւոր է լինում Մսեր Մսերեանը, որ հիացմունքով ու մեծ ակնածութեամբ է

1 Ասիկ Գարի յատուցարան:

խօսում իւր ոլորած վարժապետի վրայ: Սա իւր աշակերտական երախտագիտութիւնն արտայայտելու համար 1853 թ. Մոսկուայում հրատարակում է Վանանդեցու «Ճառ ներբողական ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առաստացու թիւն ի սուրբ նշանն Վարագայ», որ գրուած է 1815—16 թուին: Ճառի վերջում կայ և ոտանաւորով «Ներբող բարեբանութեան ի սուրբ նշանն Վարագայ»: Դա մի կէս քնարական, կէս վիպական ներբող է նման նոյն բովանդակութեան հին երկերին, լի մեկնաբանական բացատրութիւններով:

Նրա գլխաւոր բանաստեղծական երկերն են՝ «Տեսարան հանդիսին Հայկայ, Արամայ և Արայի», որ ժամանակով ամենից հինն է, բայց տպագրուած է 1856 ին Զմիւռնիայում: «Արփիական Հայտատանի», Կ. Պոլիս 1836 թ. և Ոսկի դար Հայաստանի», որ տպագրուած է մահից մի տարի յետոյ, 1841 թ. Զմիւռնիայում:

Վանանդեցին նոյնպէս հին գպրոցի մարդ է և իւր մէջ կրում է իւր ժամանակակիցների բոլոր պահասութիւնները բանաստեղծական արուեստի նկատմամբ: Եղել է մտածող ոգի, օժտուած երևակայութեամբ և խօսքի շնորհով, բայց նրա բնատուր շնորհքն անկիրթ ու անմշակ է մնացել, և ինքն ևս զգում է այդ, ուստի և ցաւելով գրում է թէ բանաստեղծում է գիւցաղներդութիւն «չուներևով իսկ և տեսութիւն անգամ նախնի հազներդութեանց մերոց կամ օտար ազգաց յոյս վաստակ յարացոյց, և մշ ևս ի նոյն պիտանեդոյն զամբողջ հնախօս մատենա»: Այդ ժամանակ ոչ Համբրոսի և ոչ Վիրգիլիոսի թարգմանութիւններն էին հրատարակուած և ոչ իսկ Բաղրատունու տաղերը: Իսկ Վիդայի Քրիստոսականը, թարգ. Թոմաճեանի, հրատ. 1832 թուին, չէր կարող ազդել Վանանդեցու երկին, քանի որ նա ծեր էր և իւր երկերը յօրինած արդէն: Բանաստեղծութեան վիպական ձևն ուրեմն ամբողջ ինքը պիտի ոտեղծէր, իսկ ինքն առանց նախորդների չէր կարող ընտանօրէն նոր գեղեցիկ ձև առաջ բերել գրականութեան մէջ: Այս պատճառով նրա երկն աչքի է ընկնում ճաշակի և արուեստի բացակայութեամբ:

Ամենամեծ թերութիւնը, որ վնասում է Վանանդեցու աշխատանքին, այն է՝ որ նա ոչ մի գաղափար չունի գեղարուեստական երկի միութեան մասին, և իբրև հին սերնդի մարդ, կարծում է, որ եթէ մի պատմական նիւթ բանաստեղծական սճով ոտանաւորի վերածուի, կը դառնայ վիպական քերթուած: Նրա «Արփիական» ամբողջապէս Ագաթանգեղոսի պատմութիւնն է ոտանաւորով գրած: Յօրինուածքի կատարեալ բա-

ցահայութիւն է. նիւթի մասերի յարմարում, աւելորդ բեռը գուրս ձգել և պակասը լրացնել չգիտէ նա: Բայց և այնպէս, թէպէտ և անծանօթ արուեստի պահանջին, բնադդարար զգացել է սիւսթեան կարիքը և աշխատելով գործողութիւնը կենդրոնացնել Ա. Գրիգորի շուրջը՝ մի քանի մեծ փոփոխութիւն է մտցրել Ագաթանգեղոսի պատմութեան մէջ: Նա տառացի չէ հետևել Ագաթանգեղոսին սկզբից մինչև վերջը, այլ ամբողջ սկզբի մասը, Խոսրովի պատերազմները, Անտիի գործը, Տրդատի փոխաւոման ու Լիկիանէոսի մօտ ծառայելը, պատմել է ապրիս Գրիգորի դայեակին, և Գրիգորն այս պատմութիւնների ազդեցութեան տակ դնում է ծառայելու Տրդատի մօտ: Այնուհետև Տրդատի քաջագործութիւնները պատմել է ապրիս Լիկեանէոսին Դիոկղետիանոսի առաջ, և վերջապէս Լուիսիմեանց նահատակութիւնը հրեշտակն է պատմում Ա. Գրիգորին Խոր-Վիրապում: Այս և սրանց նման փոփոխութիւններով գործողութիւնը որոշ չափով արագանում և սեղմ է դառնում, բայց դժբախտաբար ամբողջ միջին մասը, Լուսաւորչի քարոզութիւնը, բաց չի թողնում, որով և Վանանդեցու քերթուածի կէսից աւելին աւելորդ մի ծանրութիւն է դառնում և մի գործը երկուսի վերածւում:

Ենչքան էլ նա Արփիականի մէջ կապուած է մնում Ագաթանգեղոսին, չի վարւում սակայն Կոմիտաս քահանայի Գործք Առաքելացի պէս: Վանանդեցին բանառտեղծ է. նորից յօրինում է Ագաթանգեղոսը: Ագատ զգալով իրեն մանրամասնութիւնների մէջ, ոտեղծում է ամբողջական պատկերներ ու գրութիւններ և երբեմն իսկական վիպական ոգւով շատ յաջող կերպով կարողանում է մէջ բերել գրաւիչ ու կենդանի մանրամասնութիւններ, արտաքինի և հոգու նկարագիրներ: Իսկ այս արդէն մի խոշոր յառաջադիմութիւն է մեր վերածնութեան վիպական բանառտեղծութեան մէջ: Ահա թէ ինչպէս է նկարագրում Դիոկղետիանոսի վիճակը, երբ նա լսում է Գոթայ Լուչէ թագաւորի մենամարտի հրաւերը.

Դիոկղետեայ՝ յունկն հարեալ ուխտ աշտանակ ամբակուռ,
Յոսկերս շղջոյն և ընդ իրանն ահաւից տարաւ զսարսուռ.
Ի սաստիկաշունչն սրպէս յորժամ տատանա առնու հողմոց՝
ուռ,

Այնպէս դողալը ըստ ջերմնոտաց, իւր գալկացան գէմք
համուռ:

Վարանական ի հոգս առկեալ՝ քունն հեշտին գայր ի խոյս,
Կասկած ընդստ յերեւոյնէն զարդեանցն ի բաց մերժէր յոյս:

Ձի յոսկերացն ուժոյ տկանը ի դուռ խիզախ անխրախոյս,
 Կնատատուն միշտ փափկացեալ յԱրեւեան չէ՛ր սգւոյն հոյս:
 Կարշնեղ ջղաց փոխան զյոյն մտաց ձկաէ՛ր աստ և անդ •
 Հնարից ինչ մարթեւ ի դիւտ զանձն պահել անփկանդ:»

Ապա պատմում է, թէ ինչպէս կայսեր կոչի վրայ՝ զանազան կողմերից իշխանները ժողովւում և ներկայանում են կայսրին •

Մարզից մարզից հապ խմբէին իշխանորեար ի մի վայր,
 Որպէս յախորժ սրինգ հովուի խաշանց բազուրդ դառն
 Ի մայր •

Լիկանէսը պատմում է Տրդատի քաջագործութիւնները:

Ասաց, խոյսն և Տրդատէս կայսեր եկաց յանդիման •
 Սէգ ի հատակ ճեւ Պալհաւիկի, ցուք հրափայլք յիւր ական •
 — Իմ է այդ գործ ի հաճելեաց, ասէ, կանգնիլ տխոյեան •
 Վաղիւ յայտ ժամ նա ձերբակալ շառադնեոցի յայտատեան:

Ապա մանրամասն նկարագրում է Տրդատի հազուստն ու զինումը և մենամարտի ելնելը •

Պղնձենիւթ փոշոց գանգիւն ժամադրեցիկ ի պայքար,
 Աշխոյժ յերկուց վառեալ կողմանց թնդիւն դործէ հիարար,
 Սիրտ յոխերիմ ի ճակատուն գան ի տեղի վազրաբար,
 Բազձ ի յոգիս գէտակն ի պոսակ մենամարտիցն ուժգնակար:
 Սոս երիվարք դու ի փռնչ գափր հատանեն յապարէզ,
 Եւ կարախիւն յերկուց կողմանց բոց բորբոքէ անձնակեղ •
 Երկաթեանն ի՞նչ մարակ ի կուշտ տան արշաւել ի կրկէս,
 Շրջանոս առնուն յարձակ խաղան, յերկար բաղխին սաստ-
 կապէս ••

Եւ երբ Տրդատը ընծում բերում է Գոթաց թագաւորին կայսեր առաջ •

Ծափի զծափի սիրտ ի կայտիւ Հաովմէական համադունդ,
 Ի գոչ վաշից դքարանձաւս արձագանդեն տան ի թունդ ••

Երբ Ղիտիղեարանոսի մարդիկը թագաւորի հարսնացու են որսում. բանատեղծն առթից օղաւում է դեղեցկու-
 թեան հետեւեալ նկարագրին անելու (Եր • 148):

Հաովմայ ողջոյն թնդայր սահման յաղջկանցն ի վաղ ճե-
 պերադ,

Գեղք շղարեալք ի հրապարակս փայլակէին կարգ ի կարգ •

Զփողոսկրեայն ուսողք ծածան վարսից խարաւաշըն դիտակ,
 Նոճենաորոս դանդամայօղն յարդարէր պէ՛րճ զհասակի:
 Յերփն դեղո՛ց չքնաղացոյց գէ՛մք շողէին արծարծուն,
 Լուսնեայն յերեսս ակն այծեմանց կաթնածով ի՛նչ լուս-
 սարուն.

Յօնք մրադարդք աղեղնակեալ կիսաբարձր մէտ ի քսւն,
 Նռնակեղե այալցն ցոլք հրավառեալք ի փաղփին:
 Տաշաից խնկոց ծնօաքն ի տիպ, բոյր յանուշից հոռեան.
 Ռնդունքն որպէս յիբանանու խիզաշաւարակս գեղադան.
 Երթանց փափկիկ հարմարաբք յերփն հարեալք ի յորդան,
 Կաթուած մեղու լեղուին շնորհք զրոյց բղխին քողքաբան:
 Կճեայ կրծոց փայլուն տեսիլ ի գոյն վառեալ շուշանաց,
 Բարեյարմար մատանցն ճիւղք ձիւնապայծառք ընդ ձեռաց.
 Նոյն և մարմնոյն համայն մատամբք անհամեմատն յօրինուած,
 Զքնաւից դիտէր զսիրտ ի խանդ գերել տարփանաց:

Բայց երբ խնդրակները չար ոգու զրդմամբ բռնի կերպով
 մանում են կուտանոցը,

... Հռիփսիմեայ ցոլս արձակեալ գէ՛մք հրաշատես զարփենին,
 Ստուեր դայլոցն ածէ գեղովք օրիորդաց նահանգին,
 Յապուշ հարեալ հոյլք յուզակաց ի սխրանս գան հիացման...

Իսկ երբ նրա պատիկները ցոյց են տալիս թաքուորին.

Որպէս ուրու սիրտ կաթսօղին ի սէր վառեալ երկրէից,
 Անակնկալ ի ձեռս անճառ բերցէ ճախանս դանմահից, —
 Կամ ընդ ծաղկանց վաղաթարշամ վայելչութեան երանդից
 Զանթառամից հաոցէ ունիլ զպերճութիւնն հրճուալից, —
 Խանդ ի հողի նոյնպէս ի ներքս ածեալ կայթի՛ Գաջն արանց,
 Յայլոյ իբրու ի խելս եկեալ վաշ վա՛շ գանչէ հրճութնաց.
 Համայնց ի բաց փախչին գեղձանք, յայն կայ և եթ ակն-
 րաց,

Վայրկեանք դարուց նմա բերեն երկարութիւն շրջանաց:

Ես կուգէի, առանց երկարութիւնից փախենալու, մի եր-
 կու հատուած ևս մէջ բերել ցոյց տալու համար, թէ ինչպէս
 հանդարտ ու սիրուն պատմել գիտէ այս մոռացուած բանաս-
 տեղծը:

Խոր տխրութիւն զանհնարին աղունս ածեալ ի դստար,
 Զարբայն յանձուկն ի Հռիփսիմեայ գեղոյն լիկէր չարաշար:
 Յայգ և ցերեկ յանմխիթարն անկեալ ի սուգ անդարման,
 Եւ յայլոյ խելս այլանդակեալ կոծէր ջայլէր ի կական.
 Կուրքն գոտինք և քմպելիք հոտս ի փահրիցն Ստիգսեան,

ի բիման ազգեալ յանբերելի ածեն վշատցն ի տուգան:
 Ա. ագանոյն իւր ի շուարս անկեալ առ գիւտ հնարից,
 Դիւրումն ի սիրտ ածել պետին յայն ի մարմոք ցաւալից:
 Երէվայրեացն որոյ տան ժամ՝ բոլոր զօրացն խմբից,
 Փոքու զաղէտս մեղմել ցա. ոց որ մահաբերն է սրտից: ...
 Այն ինչ ի կառս Տրգատ ելեալ յեւան ճեպէր ընդ քաղաք,
 Շնչտ ի վերայ գայր պատուհան շանթ բարկութեան երկ-
 նառաք...

Խոտաճարակ ի շամբս անկեալ անզգամէր չարաչար,
 Մերկ զանձն ընդ դաշտոն կոծելով ընդ գայռս գայր կնճա-
 բար...

Այս ցաւալի գէպքի վրայ սուգը բռնում է ամբողջ աշ-
 խարհը և նոյն խիւ ընտելիւնը սգում է.

Բերկրանաց փախեան խնծիղք, բոխք ապաւերք խռնեցան,
 Դաշտաց բերանց յեղծ եկին գեղք, ծառք գեղողէշք
 խամբացան...

Լցաւ քաղաքն պանծալի մօռախլապատ խաւարաւ...
 Կոծի հաստին անգ Աշխենայ մեծ թաղուհւոյն գեղապանծ,
 Յաղէտաւոր յայտ կորացեալ գիպուած դնէր ոտաքանց,
 Ջայլէր կոծէր անմխիթար, վաակո հոսէր արտասուաց:
 Ո՞ փառք, ասէր, չայատտանի, այր ահնկէց շանթահար,
 Ո՞ւր պանծադոյն քո այն դահոյք յարփեան ցոլմունո աղ-
 նասար,

Աւաղ ցաւոյս... արդ ի շամբից ի տիղմն դատ հիգաբար,
 Ընդ բհհեղաց ծածկոյթ մարմնոյ գայռից շաղախք պատս-
 պար:

Ձիա՞դ սիրոյ քո սերտ ընկերս սխտիս տուից գէթ ինչ
 խուն,

Որ յամենուտ արդ կողոպուտս եմ ի փառաց բարձրագոյն:
 Ո՞ փութասցի յԱպողոնին անգր ի մեհեան երազմոյն
 Ձելից ստոյգս առնուլ գուշակս այսմիկ գիպաց դառնագոյն:
 Հայր իմ հօօր, դու Աշխարադ պետդ Ալանաց ոգի սերտ,
 Ձքո դստրիկս եկ տեսանել խանձեալ ի ցաւս իբրտ շերտ...

Բերած հատուածներից երևում է թէ ինչպիսի վիպական
 ոգի է ունեցել Վանանդեցին և ինչպիսի եռանդով կենդա-
 նացնում է նա պատմութեամբը: Նա մի անգամից մեր թմրած,
 սառն ու անշունչ բանաստեղծութեանը հոգի ու շունչ է տա-
 ւիս. ափսոս միայն, որ Արփիականի տառն հազարից աւելի տո-
 ղերից երկու երրորդ մասը աւելորդ բեռն է:

Պակաս չի վնասում Վանանդեցու երկին և նրա ճաշակը

սճի, գլխաւորապէս բառերի ընտրութեան նկատմամբ: Ոտա-
նաւորը կշտուած ոտքերով և հնչուն յանգերով, երկար վիպա-
կան առկերով, բաժանուած բառակներէ, թողնում է նիւթին
սրտաշաճ լըջութեան ապաւորութիւնը: Բայց այն վայելքը,
որ ընթերցողն ստանում է ստանաւորից և խօսքի յարմարաւոր
արտայայտութիւններից, որոնք այն ժամանակ նորութիւն են
եղել մեր գրականութեան մէջ, յաճախ անապասելի կերպով
ոչնչանում է բառերի և երբեմն շարահիւսութեան անպիտա-
նութիւնից: Նա սիրող և հեռեւոյ է 11-րդ դարու փշայած ճա-
շակին, որի նմուշը գտնում ենք Գրիգոր Մաղկիատրոսի և նա-
րեկացու աղբերի մէջ, այն է՝ լեզուի գեղեցիկութիւնը որոնել
խրթնութեան մէջ: Վանանդեցու այս պահապարկութիւնը մասամբ
ներելի է լինում, եթէ նկատի ունենանք, որ նա հին, մեռած
լեզուով է գրում, և որ նա առաջինն է, որ խոշոր բանա-
տեղծական երկեր է յորինում յանգաւոր ստանաւորով, ուստի
և ինքը պիտի ուսեղծէր մի նոր բանատեղծական լեզու, կա-
րիք պիտի ունենար հարուստ բառարանի՝ յանգեր ու ոտքեր
կաղմկու համար: Այս պատճառով նա բաւական աղատ է
վարում բառերի վերաբերմամբ. գործ է ածում քիչ գոր-
ծածական և գծուար հասկանալի բառեր, յաճախ այնպիսի
արմատներ, որոնք պարզ կերպով գործածական չեն, կամ նա-
բանոր բառեր է ածանցում ու բարդում. կամ բառերը մի
բոլորովին անսովոր նշանակութեամբ բանեցնում: Եւ վերջա-
պէս կան բառեր ևս, որ Առձեռն բառարանի մէջ չկան: Այս
ամենը բաւական դժուարացնում է ընթերցողին, որ սակայն
հետզհետէ վարժւում է այս խորթութեան թիւններին:

Զպէտք է մոռնաւ մի հանգամանք ևս: Մեր լեզուական
կրթութիւնն այժմ հիմնուած է մեր կլասիկական համարուած
գրաւարի վրայ. մենք այժմ շատ աւելի հեշտութեամբ հա-
կանում ենք մեր առաջին գրաւոր մատենադիրները, որոնց
լեզուն և աւելի է աղղել մեր աշխարհաւարի վրայ. մինչդեռ
գրանց հետ դուրսից և գրանցից յետոյ կան շատ գրաւոր
գրուածքներ, որ դպրոցական ուսման նիւթ դարձած չլինելով՝
մինչև այժմ ևս խորթ են մնացել մեզ համար: Արդ՝ Վանան-
դեցու ժամանակ եթէ Միթարեան դպրոցում մեր հին լեզուի
այս բաժանումն եղած էր և Միթարեան գրողներն արդէն
հեռուում էին դատական գրաւարին, — ուրիշները սակայն այս-
պիսի խորութիւն չէին գնում. ուստի և յաճախ այնպիսի լե-
զու են բանեցնում, որ մեզ դժուար հասկանալի է. մանաւանդ
որ այդ ժամանակ Հայկազեան լեզուի ընդարձակ բառարանը

գեռ չէր հրատարակուած և բառերի նշանակութիւնները գեռ ճշտուած չէին: Վանանդեցին ուրեմն ամեն ինչ ինքը պէտք է սովորէր գրքերից մեծ մասամբ առանց բառարանի օգնութեան, և երևի դժուար բառերի համար անձամբ բառարան է կազմած եղել իւր համարը, յաճախ ի հարկէ սխալ մեկնութիւններով, և այդ հազուադէպ երևացող բառերը դարձ է ածել անխտիր իւր քերթուածների մէջ:

Նոյն պահատութիւնները, որ ունի Արիիականը, կան և Ոսկի Դարի մէջ և մինչև անգամ աւելին ևս: Արիիականի մէջ, թէպէտ թոյլ կերպով, կայ դործողութիւն և նոյն իսկ մի միութիւն, որ առաջանում է անշուշտ նրանից, որ Ագաթանգեղոսն ևս որոշ չափով գեղարուեստական գրուածք է. Ոսկի Դարի մէջ այդ էլ չկայ: Այս խոշոր քերթուածը, մօտ 5600 15 վանկանի տողերից կազմուած, անասելի տուժում է նրանից, որ առանց որոշ ծրագրի և յաջորդականութեան է յօրինուած, և ծանրաբեռնուած է կրկնութիւններով և անպէտք մասերով: Բովանդակութիւնն է ընդհանրապէս Հայաստանն իւր պատմութեամբ և աշխարհագրութեամբ:

Առաջին երգի սկզբում Սահակ Բագրատունին խնդրում է Խորենացուն գրել Ոսկի դարի մասին, և Խորենացին պատմում, իսկապէս նկարագրում է Ոսկի դարի կեանքը, բնութիւնը, համառօտ անցնելով Ադամից և մանրամասն պատմելով ջրհեղեղի մասին: Այստեղ մենք կը գտնենք և ամեն աւանդութիւն ժողովուած՝ Նախիջևան, Ակոռի, Սիմ, Տարբան, Մարանդ անունների համար, և վերջը թէ ինչպէս մարդիկ տարածուած են Հայոց աշխարհի զանազան կողմերը: Նիւթը գիւցտոյներգութեան համար մի անպէտք բան է, բայց կան մէջը կենդանի երևակայութեամբ և աշխոյժ եռանդով առաջ տարուած այնպիսի հատուածներ, որոնք նմանը չունի մեր հին բանաստեղծութիւնը: Այսպէս օրինակ կենդանիների ելքը Նոյեան տապանից (Եր. 14 հտն), որից աւելորդ չի լինիլ մի քանի տներ գնել այստեղ, քանի որ այս բանաստեղծն այժմ այլ ևս չեն կարգում:

Բայց յապրացու մեր տապանին բացման՝ ղնոր տեսարան Մեր իսկ աչօք անդր ի Մասեաց տեսաք լերին յարեաւան. Ոգոյն ղիւմրդ ղղորդէր յարկ թռչնոցն ի թափ թեւածման, եւ գեանոյն ղիւ թնդէր յատակ ցամաքայնոցն ի կայթման: Մահնչս առիւծն որտացեալ և յադին տայր ուժգին թափ, Իբրև զանիւ հիւայր հրոյ յորսոյն ի ղիւտ գառ ի թափ. Խոթապէմ ըիրս ի ընտ ից բացեալ վերայ զանթարթափ,

եւ ընդ խռան յանձն ապաստան յերկիր խաղայր հարթա-
տալի:

Ընդ առապարս ցռուն սաստիկ հնչեալ բառանչ բոմ-
բահան,

Ի դալարեացն անկեալ խնդիր, հովտաց յածէր ընդ սահման.
Զազատութեան հարեալ գիպաց յանձկանաց չէր կապարան,
Եւ ոչ ունկանցն ազգէր քրքինջ, քանզի չուէր հարկահան...
Վա՛շ վա՛շ՝ սրպէս իբր ի փողոյ լուր վառեալ շեշտ յառ-
պարէս,

Փռաւ զլանջօք ձին սրտացր զափը հատեալ ի կրկէս.

Խիւնջագոռ իբրեւ տօնից սուր արշաւեալ ի հանդէս,

Ընդ դառիվայր խողայր լերին յարօտ դիմել փութապէս:

Նապաստակին սուր էր վազումն ահանջ ընդ ուլն իկռուան,

Առ ի կոզաց յածեալ լերին վէժ գաանիւ յօթեան.

Յանձինն ի պուրծ հանճարագիւտ շրջան գործէր ի սուրման,

Յընդոյր ի կեանս յառապարացն եղեալ ամուրս ապաստան:

Այսպէս իրենց ընաւորութեան համեմատ մի քանի խոշոր
գծերով նկարագրուած են և միւս չորքոտանիներն ու թըռ-
չունները. իսկ կապիկը.

Կապիկ ի դէմս անդ ծամածուռ նոցուն տարեալ զու-
րուական,

Խաղայր, կայթէր, խլիրտտ աայր, սողէր, սուրայր մունջ
ի բան.

Զկենդանեաց նմա զքօսանք էր խառնադանճ կարաւան,

Յայն զմայլուն յամպախազաց մնայր լերին յարտեան:

Երկրորդ երգի մէջ դարձեալ սկսում է երկու նախա-
տեղծից և պատմում է արուեստների ու երկրագործութեան
գիւտը, անկող մի տեսակ ազդագրական և գիտափորձական բա-
նաստեղծութիւն: Ապա թէ ինչպէս մարդիկ ցրում են Հա-
յաստանից դէպի Սենաար, Հայկի և Բէլի մասին, Հայկի գալը
Հայաստան, Բէլի կռիւը ևլն:

Երրորդ երգն սկսում է Արամից և Խորենացու համառօտ
պատմութիւնն է անում, խօսում է Հայոց առուտրի մասին
և թէ ինչ գաղթականութիւններ են եկել Հայաստան: Արշա-
կունիներից յետոյ գրում է Բազրատունեաց մասին և Հայոց
պատմութիւնը համառօտ տեսութեամբ, բերում հաոցնում է
մինչև նոյն իսկ Ռուսաց տիրապետութիւնը:

Չորրորդ երգի մէջ նորից դառնում է զբախտին և հիաց-
մունքով նկարագրում է, երբեմն առանձին դեղեցկութեամբ,
Հայաստանի բուսականութիւնն ու ընտելիւնն ընդհանրապէս:
Ապա մի անպէտք հնախօսութիւն է անում ապացուցանելու,

թէ գրախարհ Հայաստանում է եղել: Հետեւելով Խնձիճեանին՝ քառասունորով Հայաստանի աշխարհագրութիւնն է անում, նկարագրելով լեռները, գետերը, դաւառները: Վերջը Հայոց աստուածապաշտութիւնն ու կրօնն է գովում և պաշտպանում եւրոպացի քարոզիչների գէժ վիճելով նրանց հետ:

Ի՞նչ է այս բանաստեղծութեան արժէքը:

Վանանդեցու գլխաւոր արժանիքն ի հարկէ ձևի մէջ չէ, որը շատ անկատար է իւր ամբողջութեան մէջ: Թէպէտ մանրամասնութիւնների ստեղծող է հանդիսանում և գիտէ զգալ ընթերցանն ու երբեմն սիրուն նկարագրել, բայց նա ընդհանրապէս պրոդա և բանաստեղծութիւն չի տարբերում և ամեն ինչ խառն ի խառն ոտանաւորի է վերածում: Նրա գլխաւոր վատատիպ, որով նա մեր գրականութեան մէջ տեղ պիտի բռնի, շօշալիած գաղափարների և նոր տեսակի զգացումների մէջ է: Այս նկատմամբ Վանանդեցին իսկապէս խոշոր նորամուծութիւններ է բերել մեր բանաստեղծութեանը, երբ համեմատում ենք սրա գործն իր նախորդների ու նոյն իսկ ժամանակակիցների հետ և երբ ի նկատի ենք ունենում այն ազդեցութիւնը, որ նա թողել է յաջորդների վրայ: Նրանով է իսկապէս սկսում մեր նոր բանաստեղծութիւնը, որովհետեւ նրա գրութեան մէջ առաջին անգամ գտնում ենք մեր 19-րդ դարու գեղեցիկ գրականութեան գրեթէ բոլոր գլխաւոր գաղափարներն ու զգացումները: Շատ բան ի հարկէ սաղմնային դրութեան մէջ է, որովհետեւ 19-րդ դարու առաջին երեսնամեակում շատ գաղափարներ էլ գեռ նոր էին ծնւում մեր մէջ և պարզուած չէին:

Վանանդեցին մի կողմից շարունակելով հին կրօնական ուղղութիւնը, միւս կողմից բանաստեղծութեան առաջ գնում է մի նոր խնդիր, ազգային քաղաքական անցեալը: Նրա ձեռով սկսում է, այսպէս ասած, Հայոց քաղաքական անցեալի բանաստեղծութիւնը, քաղաքական անցեալից առած հայրենասիրական քերթուածների շարքը, որ հետզհետէ աւելի ընդարձակւում է, և որի մէջ աւելի ու աւելի ուշադրութեան է արժանանում ներկայ կեանքը «Տեսարանի» մէջ արգէն, որ միւսներից վաղ է գրուած և յիշւում է «Սրբիականի» մէջ, վիպական քերթուածների նիւթ դարձնում է Հայկ¹, Սրամ,

1 «Հանդէս դիւցադին մերոյ Հայկայ» երգի բովանդակութիւնն է Հայկի ծնունդն ու սնունդը. Հայաստանի աստուածապաշտութիւնն ու մարդկանց զեղծումը. ջրհեղեղի մասին, մարդկանց բազմանալը եւ բա-

Արայ առանձին երգերով և ապա մի չորրորդ երգով ևս՝ «Յորդոր նմանիլ նախնեաց», ամփոփումն է անում առաջին երեք երգերի: Նոյն նիւթը նա յեղջեղում է և Ոսկի Գարի մէջ և մտածք նոյն իսկ Արփիականի մէջ:

Աս արգէն մի մեծ յեղափոխութիւն է մեր բանաստեղծութեան մէջ: Գարեր շարունակ քաղաքական կեանքը մերժուած է եղել երգի արժանանալուց. բերթողները միակերպ միայն վարդ ու սոխակ, պարաէդ ու դարուն են երգել և կամ եկեղեցի ու սրբեր, կրօնական խնդիրներ, հին ու նոր կտակարանք, շատ շատ՝ Հայոց եկեղեցական անցեալից՝ հայ սրբեր. իսկ այժմ՝ բանաստեղծը առանց թողնելու կրօնականը՝ ոգևորում է Հայոց քաղաքական անցեալով: Նա աչք դարձնելով դէպի հեռաւոր անցեալը, այնտեղ բացի սրբերից տեսնում է նաև քաղաքական աշխարհական կեանքը և հեռաւոր անցեալի միջից հանում է մեր պատմութեան առասպելական դիցադներին, որոնք նրա համար սակայն իրական էին, և պարծանքով երգում է «Հայկեան ազատութեան» համար կռիւը, որով սկսում է հայ ազգի «ահեղագին տերութիւնը» (Տեսարան. եր. 51) և թէ ինչպէս օտարները հնազանդում են հայերին և

Յօրէ անտի պոյժառ փայլէ պարծանք ազգին,

Երբ միապետ հանդիսանայ մեր այս նախնին.

Յաջողք բարեաց ի Հայաստան յաճախեցին

Ձքնաղ ցուցեալ համայն ազանց այլ աշխարհին:

Ձկայ քաղաքական ազատութիւն առանց հայրենիքի, և Վանանդեցին մեր անցեալ կեանքի հետ ընտանեկանորէն յիշեցնում է մեր մոռացուած հայրենիքը, որ մեր անցեալի հետ հաւատարմ և նրանից էլ աւելի զբաղեցնում է բերթողին: «Որն է աշխարհ Հայաստան», ինքն իրեն հարց է տալիս նա. և պատասխանն այն ժամանակի համար շատ պարզ էր: Մենք մի այնպիսի հայրենիք ունինք, որի նմանը չի ունեցել և չունի ոչ մի ազգ: Մեր հայրենիքը դրախտն է, մարդկութեան առաջին և երկրորդ որսորանը, — մի հին աւանդութիւն, որ վաղուց արգէն բնիկ զբոյց էր դարձել և որ 18-րդ դարու վերջում և 19-րդի սկիզբներում շնորհիւ Չամչեանի և Ինճիճեանի զօրեղ կեր-

ժանտիլը Աշտարակաշինութիւնը. Հայկի ապստամբութիւնը, պատերազմը և յաղթութիւնը. Հայկի միապետութիւնը, աշխարհաշինութիւնը և մահրո— Այս «Հանդէս դիւցապին մերոյ Հայկայ» ուրիմն նախադադափարն է Բագրատունու «Հայկ դիւցապին»:

պով նորոգուել էր հայ դրաքէտներն շրջանում և ազգային մեծ պարծանք էր համարուում. ուստի և պէտք է տեղ գտնէր բանաստեղծութեան մէջ: Եւ ահա՛ Վանանդեցուց սկիզբն է առնում Դրախտ Հայաստանի և Նոյեան Հայաստանի դուրքը, որ այնուհետեւ երկար ոգևորում է մեր բանաստեղծներին, մինչև անդամ աշխարհաբար գրողներին, ինչպէս Գամառ Քաթիպա և ուրիշները: Դա մի սին պարծանք էր, բայց սիրով կապում էր սրտերը երկրի հետ, այն երկրի, որ ուրանում էին իր բնիկները:

Հրճուի՛մ, վաճ ինձ, Հայկեան է տուն ուր և դրախտն էր
դետեղ.

Ուստի քառից բաշխին գետոցն առաջք ուխել յաղթադեղ.
Երկիր բեղնուտ, վայր փառիկութեան յերփն ծաղկանց լուսազեղ,

Եւ նախահարցն իսկ նախ քան ջուրց կացեալ զողող տուն
շքեղ:

Անդէն և Նոյ զվեցդարեան ձգեալ զաւուրս իւր կենաց...

(Ոսկի Դար 9):

Դրախտը, Նոյն փրկութեան տեղը, մեր երկիրը, մերն է եղել. և բնական եզրահացութիւնն այն պիտի լինէր, թէ ինչո՞ւ պիտի թողնել, որ օտարները խլեն մեզնից այդ պարծանքը, որ մերն է և մենք պէտք է գովենք ու սիրենք.

Ձի թէ մարդկան յերկեակն աճուրդ մեր կաց երկիր նա-
խապար,

Ձմեր և հի՛մ կալցին պարծանս, որ յետինն են դեհը օտար.
(Նոյն, 3):

Եւ Վանանդեցին ձեռնարկում է մի դիւցազներգութիւն գրելու, որով կարողանար հայ երիտասարդներին հասկացնել Հայոց ազգի պարծանքը թէ անցեալի և թէ հայրենիքի նկատմամբ:

Բանաստեղծն ուրեմն սկսել է արդէն մտածել ազգի և հայրենիքի վրայ, համեմատել ներկայ վիճակն անցեալի հետ և երազել ապագայի համար: Ազգն ու հայրենիքն է շարունակ նրա մտքի մէջ.

Հուր է սեղանոյ իղձ ազգասիրին

Արծարծուն վառեալ ի ներքս ի հոդին.

Ուր խաղաղականք և այլքն ըստ կարգին

Աղդային դարձուածք հաճոյ ձենձերին:

Այդ աղդն ու հայրենիքը անցեալում՝ ներկայանում են նրան գաղափարականօրէն գեղեցիկ, համակ քաջութիւն, քաջազնութիւն և բարեշինութիւն:

Ի Հայաստան նախ կանդնեցան շէնք և քաղաքք ի հիմանց,
Անդեայք և հօտք անդ խայտացին նախ ի ծնունդս սերմանց...

Հայաստանին են նախարուեստ վաճառականքն ի հանճար,
Որք զառաջինն ի տուրևառս կարգ հաստեցին զճարտար,
Եւն:

(Ո. Դ. 88):

Ամեն ինչ լաւ է եղել անցեալում, ասում է բանաստեղծը, այնպէս միայն որ իմաստութիւնը պահաս է եղել Հայոց միջից: Մեր նախնիքը յաճախ, մինչ հաւատարիմ ծառայել են օտարին, զինուել են իւրայիններէ դէմ և պատրաստ են եղել իրենց պետութիւնն ուրիշներին մատնելու,—իրենցը քանդել են ուրիշինը շինելու համար:

Բճրէ փառաց քոց, Հայաստան, զի Հաստողին շնորհաց
Բան

Ի բեզ յառաջ հնչեաց յատուկ ի մարդկածայն բարբառման...

Քոյդ հնչեցին անձաւք լերանց նախ արձագանգ պարզ ի դարձ,

Քոյոց կայից ծառք և ծաղկունք յակճիւ հարան շքաքարձ,
Գետք և աղբիւրք ի քէն բղխման ուխտ յորդեցին նախապարձ,

Բայց իցիւ թէ քոյին որդիք զքոյդ գիտէին շուք, յանկարձ...

(Ո. Դ. 353):

Եւ հայրենիքի արժէքը չճանաչելու, իսկ օտարներին հաւատարիմ ծառայելու այդ ոգին մեր պապերից ժառանգել ենք մենք և պահում ենք մինչև այժմ մեր արիւնի մէջ:

Ի Մոսկովաց հայեւոց Վայսեր՝ զոր Հայոց տայ գովութիւն,
Աղդ է անկեղծ և մտերիմ առ ո՛ր և է տէրութիւն:

Ջոր և արդիւնքն ի նորս և հինս հաւաստիս տան հաստատուն,

Սակայն զի՞նչ շահ, զի յանհոգս են զիւրեանց յարդել բնիկ տուն:

(Ո. Դ. 325):

Ի՞նչ չաճ հայ ազգի ամեն բարեմասնութիւններէց, երբ անհոգ են մնում իրենց բնիկ տունը յարգելու: Եւ ոչ միայն գրանից օգուտ չունին, այլ տեսէք թէ ինչ է եղել դրա հետեանքը:

Վարդապետին ուստի Հայկեան եղեալ սերունդք ի յաւար, Շքեղ պատուոյն անկան փոխան՝ մրգուզանացն ի խաւար. Ոսկեգրուագ յարկացն շէնք և սրահից գեղապար, Ցաւով առեմ, յատակեցան յանշէնս եղեալ առապար: Սարկութեան անուրն ի մերս անշուք կապեալ պարանոց, Հայրենատուրն ի սպառ քերքեաց ի վիճակէն աւայոց. երկիր՝ որ դրախտն էր փափկութեան անմահութիւն ծաղկանոց,

Գծնեայն եղև ազգաց կոխան՝ մեր յանդարման սրտից խոց: Խեթիւ ի մեզ զի հայեցաւ Արփին արգարն յիւրն ի դատ, Զմեր դիմացն ի տխրաթոյր մերկել տեսին ըզախատ. Մերոցն եգեալ ժանա գրացեաց կատականոց ի նախատ... (Ո. Դ. 326)

Եւ այս ամենը ինչո՞ւ համար, ի՞նչ մեղք են արել, որ Առաքառ պատժում է հայերին: Այո՛, մեղանշել են, բայց այլ և ոչ միջնադարեան հայեացքով, այլ միայն Նրա՛նով, որ օտարաւոր հայն անհոգ է իր բնիկ տունը յարգելու համար, և դրա համար հենց այդ օտարներն Նախատանքի, ծաղր ու ծանակիւ առարկան է դարձած: Արգարեւ եղել են մեր պատմութեան մէջ շրջաններ, երբ հայերն ընկած դրութեան մէջ են եղել, բայց ոչ այժմեան պէս, որովհետեւ այն ժամանակ առաջ են եկել ազամարդիկ, որոնք «փոյթ յառնէին յազգին պատիւ ձեռնարկութեամբ» իսկ այժմ... այժմ բանաստեղծն անմխիթար է.

Սակայն զարդիս անփառունակն եմք ազեալից ողբերգութեամբ. Աշխարհակալ մեր մթացաւ պայծառ թագին փայլատակ, Արքայազանց համակ բարձաւ տոհմեղութեան յիշատակ. Զի ցան և ցիր յոլորտս անկան յօտարազգեացն ի պառակ, Նորոգութեան ոչ ունելով զակնկալեաց նպատակ:

Ահա թէ ինչ վիճակի մէջ է պատկերանում հայ ազգն ու աշխարհը բանաստեղծին, և նրա սիրտը կտրատուում է տեսնելով այդ ամենը, և սրտի խորքից ձայնում է.

Ո՛վ, զի՞ հոգւոյս փղծիէ զկայս չարախտավար այս արկած, Եւ կենդանւոյն զմահուն տայ կէտուլ օրհաս վայրանկած:

Եւ այսպէս մեր բանաստեղծութիւնն արդէն գտել է իւր իսկական խորը զգացմունքի աղբիւրը. դա հայրենասիրութիւնն է

խոխական ընդարձակ իմաստով, որ միանգամից իւր բոլոր թափով գալիս է բարձրացնելու մեր քերթուածները և զօրեղ շեշտեր հնչել տալու նրանց: Եւ Վանանդեցու այդ շեշտերի մէջ մենք գտնում ենք և Ալիշան և Գամառ Քաթիպա և Պէշիկթաշլեան և նոյն իսկ Աբովեան: Եւ այլապէս էլ չէր կարող լինել, քանի որ բանաստեղծութիւնը կապուած է կեանքի հետ, իսկ կեանքն ու կեանքի ձգտումները նոյն են եղել դրանց ժամանակ:

Բանաստեղծն առաջին անգամ սկսում է վերլուծել ներկայ հայ կեանքը, որի մէջ ոչ մի միջիթարական բան չի գրանուած: Հայն ընկած է, «վայրանկած» այն աստիճանի, որ շատ հայեր հայ անունն անարգանք են համարում իրենց համար:

Անունն՝ որ բուն էր պարծանացի նախնեաց քաղցր դարուն,
Այժմբիկ, վա՛յ ինձ, յանախորժակն անկեալ դնի հիգութիւն:
Ձի են բաղումք, որք անարգանս անձանց դնեն Հայ դանուն,
Յայլոց միտեալ յիմար մտօք աղնուանալ յեալն առն:
Ի ծայրայեղն այս՝ մոլիլ կենցաղապէս չէ մարդկան,
Բայց մերքն և յայս անզգամեալ զսիրտ կալան խժական:
(Ո. Դ. 326).

Հայն այլատեսութեւ է. քաղաքական իշխանութեան անկումից յետոյ՝ սկսել է ցրուել այլ և այլ կողմեր և իւր բնիկ ազգային ոգին հեշտութեամբ յեղափոխում է իւր գիւրափոխ բարքերով. նայելով թէ որ երկրում է, նրանն էլ ընդունում է շարունակ փոփոխելով, այն աստիճանի, որ

«Մինչև զհայութեան անուն չլիշել յայլազանց երկրին.
Որով օր աւուր կորուսեալ զյարգ և զշուք անձին.
Առ օտարազրիս անկած ցուցանեն զաղբն դլխովին»:
(Տեոարան. եր. 140):

Սրանից էլ աւելի ոտորանու չի լինիլ մի ազգի համար:
Ի՞նչ է դրա պատճառը և ի՞նչ պիտի լինի դրա ճարը,
հարց է աւելիս բանաստեղծը և պատասխանում:

Ոչ թէ ընդհանուր ազգի բնաւորութիւնն է պատճառ այս խորին անկմանը, այլ կրքութեան պակասութիւնը: Ուրեմն պիտի կրթել հայութիւնը: Եւ մի պիտի հոգայ կրթութեան համար:—Ամենայն հայ մարդ և յատկապէս քերթողները: Եւ այսպիսով բանաստեղծութիւնը Վանանդեցու գրչի տակ ստանում է մի նոր ազնիւ նպատակ. նա մինչև հիմա գրում էր Աստուծու և սրբերի, վարդի ու սոխակի փառաբանութեան համար, իսկ այսուհետեւ պիտի պարտպի ազգի վերաշինութեան գործով, հասարակութիւն կրթելով: Եւ այս նպատակին

նուիրում է Վանանդեցիին իւր երկերը: Լինելով ժամանակակից ինժեներանի ու փէշաիմալճեանի, նա նոյն իսկ իւր Արիիականը գրում է «ոչ ի պատիւ այնքան որքոց հռչակ հարեալ գութութեան» • Սմէնապարծ քանդի նոքա ի փառս կան պարաւոր», որքան Հայաստանի «երգակներն» համար • և նա համարում է, որ իւր օրինակին պիտի հետեւեն շատերը նոյնպիսի երգեր յօրինելով:

Վեհազանցն այժմ ի սիրտ վառեցի խանդումն անուշակ
Երազ ի յորդոր գալ քաջազնութեան յարգեանցն ի գուշակ:

Եւ հայ բանաստեղծների այդ աշխատանքի արդիւնքն այն պիտի լինի վերջը, որ պիտի դադարի գփնեայ գանգաթն ազգից, որ արդէն ձգտում է յարութիւն՝ առնելու, և պիտի դայ մի օր, որ պիտի կործանուի հայ ազգի խաւար ու խարխուլ ամբարտաւը, որ կարծես նրա կոչումն է դարձել:

Զմրեացի դադգէն, որ յառնել դիտէ, գփնեայ քանքարտակ,
Նսեմն այն կոչման հիմն ի վեր գայցէ խարխուլ ամբարտակ:

Ահա թէ ինչով է ոգևորւում և ինչ նպատակ է դնում Վանանդեցիին մեր բանաստեղծների համար • Նրան ոգևորողը ազգի սէրն է, և այս սէրն է գրգռում նրան գրիչ առնելու:

Մշտատենչիկ սոյն այս խանդանք յաղդին ի սէր սիրավառ
Նշաժաղիկս իմաց ալեաց զերկանց մատոյց նոր պատճառ:

Ի՞նչպէս և ինչո՞վ պիտի առաջ բերել ազգի վերաշինութեան գործը: Վանանդեցիին այդ մասին ունի որոշ հայեացքներ, որ ցրուած են նրա երկերի մէջ և որոնք ամփոփուած են նրա «Տեսարանի» չորրորդ երգի մէջ, որ մի գիտակիցական քերթուած է, ամբողջական մտածութեամբ, ի հարուստ և առողջ գաղափարներով: Այստեղ հանդէս է գալիս վարժապետ և քահանայ բանաստեղծը, որի գլխաւոր հոգն է կրթել աճող սերնդի սիրտն ու միտքը: Գոտարարակութեան մի ամբողջ ծրարիւր է բանում նա ընթերցողի առաջ:

Աւսման էական հոգին պիտի կազմի նմանող լինել մեր հայրերին, թէ հոգեւոր և թէ մարմնաւոր: Այս պատճառով և Վանանդեցու գրեթէ բոլոր բանաստեղծութիւնը ղրադւում է մեր քաջ և իմաստուն նախնիքների արարքները ի տես հանելով: Նոյն իսկ «Տեսարանի» այս չորրորդ երգի մէջ համառօտ, բայց ուժեղ կերպով թւում է մեր նշանաւոր նախնիքները Հայկից սկսած մինչև անգամ Բիւզանդական հայազգի կայսրները:

Մեր այս են նախնիք և որք ի սոցայն կարգի դերազանց,
ձախ բարեկրօութեան ազգին յայտնեցան հայր ի Հայկազանց,
Քանձեալ և զարդիւնս լցին զաշխարհ մեր ի շուք պար-
ծանաց:

Անպարտ զօրացան ի կոր կործանել զոգին թշնամեաց:

Մանուկը պէտք է աշխատի իր ընտիր նախնիքների հարա-
զատ զաւակը լինել:

Հետեւեա, որդեան՛կ, անշեղ հետեւեա ուշ ընդ կուրծս ածեալ,
Զի ընտրագոյն հարց զաւակ զարգացցիտ հարազատ ընտրեալ:

Եւ ի՞նչ է հայրերին նմանող լինելը,—եթէ ոչ նախնեաց
արդիւնքը, որ ամբարուած կայ ազգաշինութեան համար, մարդ
պէտք է ճանաչէ և ինքն էլ աշխատի վրան և մի քայլ առաջ
տանէ: Պէտք է հայրերի գործով ոգևորուել և նրանց գործը
շարունակել:

Այս մանո՛ւկ դու, հարազատ ծնունդ գերաբուն քաջաց,
Զօրացի՛ր հօր անմոռաց պահել զշուք քոց նախնեաց:

Զանք յարախոտակ մի անգործ կացցէ ի քեզ և թմրած,
Զազգին զօգտաւէտն ի հանգէս կացո՛յ յամենայն շարժուած:

Զաւակ ես քաջաց, մի՛ շիջցի ի քեզ ոգին նախահարց:

Զարմ ես վեհազանց, յարեանց ի նոսա յօրանալ ի վարձ:

Քանզի զի՞նչ օգուտ ունիլ զնախնիս ի մեծ դիւցազանց,

Եւ նուազատանալ անտոհմից գործովք ի կարգ վատ արանց:

Ազգասիրութիւնն ուրեմն ազգաշինութեան մէջ է տեո-
նում բանաստեղծը և անհատը պարտական է անել ամեն բան
հասարակութեան և ազգի համար:

Քեզ յատուկ պարտիս զհասարակաց բարին վերադրեալ:

Զի թէ մեռանիլ վասն հայրենեաց քաղցր է և դովեալ,

Զի՞նչ այլ ինչ մնայ՝ որում ազգայինք չեն պաշտաւորեալ:

Իսկական հայրենասիրութիւնը ազգին յարելու, միու-
թեան մէջ է և ոչ երկպառակութեան, ներքին կռիւների, բա-
ժան բաժան լինելու մէջ: Եւ քերթողը ժամանակի կրօնական
կռիւներին ու պառտկաւորմաներին ակնարկելով՝ կոչ է անում:

Յարեցուք յազգ մեր, սիրեցուք զազգ մեր սէր համեա-
տազին:

Մի՛ դիտարս մեր թողցուք ի յազուրդ որդւոց օտարին:

Այսպիսի ազգասիրութիւնն ահա՛ որ միութեան ու ազ-

դաշինութեան մէջ է երեւան գալիս, դառնում է աղբւր
ազգի բարգաւաճման։

Ազգին շինութեան սէրն է նախադրելը յերկնից վտակեալ
Որով ազգային գործոց դարաստանք ծաղկին ոռոգեալ։

Այս տողերի մէջ մարդ կարդում է ապագայի Պէշիկթաշ-
լեանի «եղբայր եմք»ը։ Բայց և Վանանդեցին հայրենի հաւատի
աւանդապահութիւնը քարոզելով՝ ընդունում է խղճի ազա-
տութիւն և խրատում է կրօնի վէճ չհանել, օտարազգիներին
յարգել։

Վարեսջիր անկեղծ ընդ օտարազգիս հոգւով հեղութեան։
Մի՛ նիւթեր զչար, կա՛լ խաղաղութիւն՝ որքան մարթական։
Մի՛ բամբասանօք եղծեր զնոցուն զաւանդն այլական,
Զի ի հարց նոցին յատուկ է նոցա իսկ գործադրութեան։

Կրօնի ազատութիւն ընդունելով հանդերձ՝ նա իւր կեանքի
վերջում սակայն սաստիկ զայրանում է ամերիկեան բողոքա-
կան քարոզիչներին դէմ, որոնք այդ ժամանակ հաստատուել
էին Չմիւռնիայում։ Անշուշտ նա շատ վիճաբանութիւններ է
ունեցել նրանց հետ և պղտորուել է իւր հոգու խաղաղու-
թիւնը, որ հարկ է համարել իւր Ոսկի Դարի վերջում վիճա-
բանել նրանց հետ։ Այդ հատուածը, որ յետոյ աւելացրած
րան է և վնասում է երկի ամբողջութեանը, ցոյց է տալիս
այն ատելութիւնը, որ նա տածում է դէպի օտար քարոզիչ-
ները, որոնք վտխանակ հեթանոսներին երթալու, քրիստոնեա-
ների մէջ քրիստոնէութիւն էին քարոզում։

Մերոց կարգաց մեք սիրահաճ եմք ի սրտէ և հաւան....
ՅԱմերիկեան ձեր դարձարուք յորջ նորափոր սոկեծոր,
Ի վայրենեաց ճեպեցէք սարս որսալ էրէս ի ծործոր.
Սինէ, ձեաքոն և որ այլք են անհաւատից մուրս փոր,
Զձեզ կոչեն, է՞ր յուլանայք, հա՛մ վազեցէք ուժգնասոր։

Վանանդեցու զայրոյթը շատ հասկանալի է. կաթոլիկու-
թեան վէճերը դեռ չվերջացած՝ վրան աւելանում է և բողո-
քականութեան վէճը, որով և ազգաշինութեան գործը խան-
գարւում է նոր երկպառակութիւններով։ Ուստի և մեր բա-
նաստեղծը բողոքում է ասելով.

Յիմանալին մի՛ սողոսկիր յԱրփաւորչին մեր այդի,
Դաւարագեղ զի ծաղկեսցի պտուղ բերել զյարգի.
Մշտահարուածն՝ ի թշնամեաց անմեղ մանկունք Հայ ազգի
Հարան մարմնով, մի՛ ևս հարցին վէրս ընդունել ի հոգի։

Երբեմն նկարագրելով միտիոնարներին վարմունքը, նրանց բանեցրած հնարները, խաբեբայութիւններն և խորամանկութիւնները, լիառատ գտնձի միջոցով միամիտ մարդկանց հրապուելը, հայոց հին կարգերի ոչնչացնելը,—չի համբերում և որոմտած բացառանշում է վերջը.

Շանց և թռչնոց գէշ ձեր ոսկերց օ՛շ թէ մասնէր կոտորած:

Նա դէմ է դուրս դալիս և ըողըտականներին կրօնական դրբերէն, որոնք «ընդդէմ մերոց ծիսից բերեն զբան բարեքանդ», և իրաւունք է տալիս Պատրիարքին, որ նղովում է նրանց գրքերը.

Մուշ կարկեսցի՛, մեզ չէ պիտոյ Ամերիկեան սին քարոզ...

Մանկունք Հայկեան, մի՛ յայնոսիկ իղծս լայնէք վայրապար.

Մի՛ ընթեռնուք զգիրս նոցա, ուր իմաստութեան չիք նպար:

Եւ այսպէս Վանանդեցին իւր ժերութեան օրերում դառնում է երգիչ միտիոնարներին դէմ կռուողներին: Նրա մոլեռանդութիւնը սակայն միայն կրօնական գրքերի դէմ է սւղղուած, որովհետեւ իսկոյն անմիջապէս աւելացնում է, թէ չպէտք է փահուած մնալ միայն հայ ուսման մէջ.

Մի՛ մոռանար և յայլ առուաց թռչակ առնուլ պիտանի,

Միայն զի մի՛ զքո զեղծցեն վայելչութիւն մայրենի:

Այստեղ արդէն դարձեալ երևան է գալիս երիտասարդ Վանանդեցին իւր յառաջագիմական ոգւով, որ ազգի վերհուրթիւնը անսնում է ուսման մէջ, ուսում լայն, ընդարձակ մտքով.

Ծնողք մարմնաւորք, թէև չէք ծանօթ գրական շնորհին,

Մի՛ անգրադէտ թողուք զմանկունսն ի թարմ հասակին:

Բայց ուսումը պիտի լինի նախ մայրենի լեզուով և հայրենի հոգւով և ապա նոր օտար ազգերի: Որքան այժմէութիւն ունին հետեւեալ տողերը.

Մտախցեն մանկունք նախ ի հայրենի վարժն գրաւոր,

Ամբարել ի միտս գնախնեացն ազգիս զարդիւնս օգտաւոր...

Ջանս՝ նախագոյն յուսումն լեզուի քո հայրենական,

Ապա յայլ լեզուաց վարժումն դայցեո ըստ վայելչութեան:

Անկարգ եռանդն է զոր ունին ոմանք ի շաւիղ ուսման,

Լքեալ զսեպուհն՝ զօտաւացն ունիլ զգննուն զջան:

Այսպէս միայն կրթուած մանուկը կը լինի իւր հայրերի

հարազատ ղաւակ և կըկարողանայ իւր պարտքը կատարել իւր ազգի նկատմամբ, և այն երեք միջոցով.

Ազգային դարձոց երկւք վճարել փորձն մեզ յայանեաց.
Ի զիր, ի սուր և յարհեստսն ի պէտս հասարակաց:

Իբի ընդունակութիւն ունեցողը դրանով պիտի աշխատի բարձրացնել իւր ազգը՝ դործելով դրականութեան, դիտութեան և փիլիսոփայութեան համար. ու պահեստի ընդունակութիւն ունի, պիտի արհեստները զարգացնի և հարստացնի իւր ազգը: Իսկ ո՞ւրք: Ինչի՞ է պէտք դա:

Ինչքան էլ հայերն անտարբեր հանդիստանա լինէին յունական աղատութեան կռիւներին, այդ մեծ յեղափոխութիւնը չէր կարող չազդել նրանց վրայ և Վանանդեցին, Ջիւղայիայում նստած, չէր կարող չմտածել այդ մասին: Եւ ինչպէս երևում է նա երկար խորհրդածել է այդ մասին և եկել է մի որոշ եզրակացութեան: Նա երեւի լաւ կշռել է հայ մարդու հոգին, որ րբի գործածութիւնը քարոզելով՝ հարկ է համարում ամենից առաջ մի զգուշութիւն անելու.

Ծնա՞ր ի սուտեր, մի՛ դադանասցիս ի հեղումն արեան:

Իւր ժամանակի համար նա՞ղէնքի գործածութիւնը քարոզում է ինքնապաշտպանութեան համար.

Ըստ մեր վիճակի այժմիկ չեն ի պէտս դէնք ղինուորութեան,
Այլ ի պաշտպանել անձին ի դիպումսն ուղեորման,
Ի դործ արկ որպէս օրէնք ընութեան տայ քեզ հրաման:

Սակայն Վանանդեցին դրանով միայն չէ սահմանափակում դէնքի նշանակութիւնը: Դա ունի և մի այլ կարեւոր ու օգտակար գործածութիւն: Ինչպէս ինքնապաշտպանութեամբ մարդ իւր անձն է պաշտպանում քնական օրէնքով, նոյնպէս մարդ պարտական է սիրով, արեաբար և աննկուն սրտով նաև ազգի շահերը պաշտպանել, որ և անհատին են: Նա պարտական է դէնքով անսասան դէմ դնել ամեն վտանգներին, որ արգելք են լինում ազգային շահերին. ոչ մի դէպքում չպիտի վախենալ.

Աննկուն սրտիւ տոկալ վտանգացն զթուարութեան,
Որք շահուց ազգին և քո իսկ անձին բերեն ղխափան . . .
Նա՛ ի մահուանէ որ զամենայնիւ թուի ահաւական,
Ոչինչ վահրտալի, երբ չիք ի նմա վատանուն նշան:

Արդեօք Վանանդեցին ապստամբութիւն է քարոզում: Բնաւ ոչ. նա շատ լաւ ճանաչում է հայ աղբի վիճակը. գիտէ, որ դա իւր ժամանակին յիմարութիւն կը լինի և մեծամեծ չարիքների պատճառ կը դառնայ: Պէտք է հանդամանքները լաւ կշռել, ինչպէս Վահան Մամիկոնեանը և ուրիշ քաջարի հայկազուններն են արել: Խոհեմութիւն է հարկաւոր և շրջանկաւորութիւն:

Չասեմ քեզ այսուիկ որի զգեստուի գլանդգնական,
Մխեալ զանձն ի վիշտս որք ի քոց կարեաց անյարգութիւ մնան...
Առանց պատճառի ի վտանգ մխիլ ի վեր քան զարժան,
Փորձել է զԱստուած, ասաց Տէրն մեր առ փորձիչ սատան:

Ինչպէս որ նաւաստիները, երբ ալիքները յուզուած են, նրբին խորհրդով ալիքների դէմ են դնում և առանց նաւաբեկութեան՝ նաւը տեղ են հասցնում, այսպէս և դու, հայ մարդ, պէտք է քո մարմնի ոյժը բանեցնես շրջագէտ մտքով և այդ գէպքում միայն դու քո հայրերի հարազատ որդին կը դառնաս և կառնես «ղպատիւ յերկուս յաւիտեան»: Մի կողմ ուրեմն այժմ մեր ուժից վեր յանդգնութիւնը, որ աստուածփորձութիւն է. այժմիկ միայն ինքնապաշտպանութիւն: Բայց եթէ հանդամանքներն աւելին են ստիպում անել, ա՛յն ժամանակ ինչպէս պիտի վարուել:

Այլ թէ քեզ հասցէ վտանգ ինչ կարի տհաւորական,
Մի՛ կորուսես անդ կնատ մեղկանօք զոյժ տեղդութեան:

Այն ժամանակ ուրեմն պիտի արիւնսալ և զգաստացնել հոյին ոտնատակ տուողներին:

Իսկ թէ յարիցէ որ ռանհարու շքոյ Հայկազին,
Կամ զգաստացուցէ կամ ընդ վայր հարցէ միութեան Ոգին:

Ես չեմ ուղում այլ ևս կանգ տանել այն քարոյական խրատների մասին, որ Վանանդեցին ստանում է աւանդութիւնից: Դրանք ընդհանուր բաներ են: Բայց այն ամենը, ինչ որ վերեւում բերեցի, նրան ներկայացնում են իբրև մի նոր տեսակի քերթող, որ իւր մէջ ամփոփում է իւր ժամանակի ոգին:

Նա է առաջին նազամ մեր բանաստեղծութիւնը մօտեցնում կեանքին և ծառայեցնում կեանքի համար: Եւ նրա բացած ճանապարհով ընթանում են սերիշները յաջորդ երեսնամեակում: Բայց զրանցից առաջ մնաց մեղ խօսել և մի ուրիշ բանաստեղծի, Ալեմդարեանի մասին:

Մ. Աբեղիան.